

ԱԿՆԱՐԿ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՄԲ ՊՂՆՁԵԱՅ ԹԱՍԵՐՈՒ ՎՐԱՅ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ (adakessian@haigazian.edu.lb)



ՄՈՒՏՔ

Դեռ կանուխ կը թուի ակնկալել հայ պղնձագործութեան ամբողջական ուսումնասիրութեան փորձ մը: Առայժմ հայկական պղինձին մասին մեզի ծանօթ հրապարակումները, ուսումնասիրութիւնները կը մնան նեղ, առանձնակի, չընդհանրացուող (կամ սահմանափակ ընդհանրացումի ուժականութեամբ) հետազօտութիւններու ծիրին մէջ: Այս առումով, նախապատրաստական քայլ կը նկատենք համահաւաք շտեմարանի մը յառաջացումը, ուր գէթ նկարներով (եւ համապատասխան չափագրումներով) ներկայացուի հայկական պղինձին տեսականին: Յիրաւի, Հայաստանի Հանրապետութեան Սարդարապատի ազգագրութեան, Երեւանի Յովհաննէս Շարամբէեանի անուան ժողովրդական արուեստներու, կամ Հայաստանի պատմութեան թանգարաններէն մէկուն կամ միասնական նախաձեռնութեամբ կարելի է յառաջացնել հայ պղնձարուեստի շտեմարանը, որուն վստահ ենք - տակաւ - կ'աջակցին Սփիւքի հայկական թանգարաններն ու անհատ հաւաքորդները՝ տրամադրելով իրենց պղնձեայ հաւաքածոներուն լուսանկարներն ու չափագրութիւնները: Նոյն նպատակին համար, տեղին է դիմել նաեւ ռուսական, Կովկասի եւ Միջին Արեւելքի թանգարաններուն եւ այլուր...:

Հայկական պղնձագործութիւնը, Հալէպի նորագոյն պատերազմին հետեւանքով, կը թուի թէ իր մայրամուտը ապրեցաւ Սփիւքի մէջ: Կը կարծենք սակայն որ Հայաստանի Հանրապետութեան կարգ մը քաղաքներուն

մէջ - ինչպէս Գիւմրի - կարելիութիւն է ապահովել անոր մասնակի գոյատեւումը¹:

Այսքանով անշուշտ չ'աւարտիր հայ պղնձարուեստին ուսումնասիրութեան նախափուլը: Կայ տեսաբանական առնուազն մէկ հարց՝ պատկանելիութեան խնդրայարոյց պարագան: Ի՞նչը պիտի համարել «հայկական պղինձ», կամ ի՞նչ է «հայկական պղինձ»ին կամ «հայկական պղնձարուեստ»ին սահմանումը. պղնձեղէնին ինքնութիւն տուողը իր 'ծննդավայր' հանք-տեղավա՛յրն է, թէ՛ զինք իբրեւ կիրառական իր արտադրող անձ-աշխատանոցը, կամ՝ իրեղէնը գործածողը, կամ նաեւ - եթէ գտածոյ է - իր պեղավայրը:

Յամենայնդէպս, մեզի կը թուի թէ, երբ հումքը, լուսանկարները մէկտեղուին, կրնայ նուազ դժուար ըլլալ հայկական պղնձարուեստին սահմանումին մատչումը, ուստի եւ հետազօտումը՝ մեկնելով առկայ նիւթին տրամադրած հնարաւոր փաստերէն:

Մինչեւ այդ, սակայն, այս աշխատութեամբ կ'անդրադառնանք բաղնիքի հայկական թասերու մէկ տեսակի մը², առանց յաւակնութիւնն ունենալու ամբողջական պատկեր մը ներկայացնելու: Մերը փորձ մըն է, բայց մանաւանդ կոչ մը՝ հայկական արհեստարուեստի այս բնագաւառին առաւել տիրութիւն ընելու:

ԲԱՂՆԻՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՍԵՐ

Նիւթը ուսումնասիրելու համար ջանացինք մէկտեղել-ցուցակագրել առկայ թասերը: Հարցուցինք հաւաքորդներու³, թերթատեցինք հայկական

¹ Գորիս մեր այցելութեան (9/1-2/2/2021), իմացանք որ քաղաքին մէջ կը գործէ պղնձագործ մը, որ կը թուի ունենալ ստեղծագործական սահմանափակ պայմաններ:

² Կարելի է առանձնացնել բաղնիքի հայկական թասերու առնուազն երեք տեսակ, ըստ ձեւի:

³ Կարօ Անտոնեան մեր ուշադրութեան յանձնեց պոլսահայ հնավաճառ Մուրատ Պիլիրի կայքէջին մէջ ցուցադրուած թաս մը: Կայքէջին (<http://www.muratbilir.com/Products/Bath-Bowls>), մատչեցանք 23 Յունուար 2017ին, ուրկէ քաղեցինք աղիւսակին մէջ տեղադրուած տուեալները: Արուեստաբան Հրազդան Թորմաճեան տրամադրեց հալէպահայ հաւաքորդ եւ պղնձագործ Ներսէս Պարսումեանի հաւաքածոյի վեց թասերու նկարները: Հալէպահայ հաւաքորդ, բանասէր Միհրան Մինասեան մեր տրամադրութեան տակ դրաւ իր մօտ գտնուած հաւաքածոյէն, իսկ լիբանահայ հաւաքորդ Սասուն Սիմոնեան մեր տրամադրութեան տակ դրաւ իր նմուշները: Դիմած ենք նաեւ այլ հաւաքորդներու, որոնք պատասխանած են թէ չունին նման նմուշներ (Օւէփ Թըքաթ՝ Փետրուար 2021) եւ Արթօ Թաուքչեան՝ Մայիս 2021):

պղնձեայ իրերու հաւաքածոյ-նկարագիրքեր⁴, յօդուածներ⁵, դիմեցինք թանգարաններու⁶, յայտարարեցինք մամուլով⁷, ընդգրկեցինք նաեւ մեր հաւաքածոյին օրինակները եւ կարելի եղաւ մէկտեղել 28 նմուշ: Այս քանա-

⁴ *Treasured Objects: Armenian Life in the Ottoman Empire 100 Years Ago*, Vazken Khatchig Davidian, Susan Paul Pattie, Gagik Stepan-Sarkissian (eds.), Armenian Institute, London, 2012 զիրքին մէջ գտանք մէկ նմուշ (էջ 39): Մէկ նմուշ կար նաեւ վերջերս լոյս տեսած Մարետա Կիրակոսեանի *Հայաստանի պատմութեան թանգարանի ազգագրութեան ֆոնդի մեքաղէ իրերի հաւաքածուն. 1 (XV-XIX դդ.)* (Անտարես հրատ., Հայաստանի պատմութեան պանգարան, Երեւան, 2021) նկարագիրքին մէջ: Թրքմանեանի պատրաստած *Գալէմքեարեաններ. Այնթապ-Դամասկոս-Հալէպ/The Kalemkarians: Ayntab-Damascus-Aleppo* (Տիգրան Մեծ, Երեւան-Հալէպ 2016). նաեւ՝ *A Legacy of Armenian Treasures: The Alex and Marie Manoogian Museum*, Edmond Y. Azadian (ex. Editor), Indiana University Press, 2013. նաեւ՝ *Էջմիածնի գանձեր*, Էրեբունի հրատ., Ֆինլանտա, 1984. նաեւ՝ Osep Tokat, *Armenian Master Silversmiths*, Van Publishing Inc., Los Angeles, 2005. նաեւ՝ *Aspects of Armenian Art, The Kalfayan Collection*, Museum of Byzantine Thessaloniki, Athens, Greece, 2010 հատորները չեն պարունակեր վերոյիշեալ թասերէն:

⁵ Բուպերթա Ըրվայի նկարագրած պղնձեայ տասներկու իրերուն շարքին չհանդիպեցանք մեր որոնած տեսակին (Roberta Ervine, “Twelve Objects with Armenian Inscriptions from a Private Collection in New York,” in *Between Paris and Fresno: Armenian Studies in Honor of Dickran Kouymjian*, Barlow Der Mugrdchian (ed.), California, Mazda Publishers, Inc. Costa Mesa, 2008, էջ 125-139): Իր «Հայկական պղինձը 1600-1915» յօդուածին մէջ (*Հայկազեան հայագիտական հանդէս*, Զ:1977-78, էջ 197-242), Պերճ Կարապետեան չ'առանձնացներ բաղնիքի այս թասերը: Սակայն իր յօդուածին նկար 26ին մէջ (էջ 223) կը տեսնենք այդպիսի երկու թասեր, որոնք արձանագրութիւններ ունին:

⁶ Սեպտեմբեր 2016ին Սարդարապատի ազգագրութեան թանգարանի պղնձեայ իրերու բաժնի պատասխանատու Նարինէ Եղիկեանի հետ փնտռուեցինք թանգարանին պահեստը եւ գտանք մէկ նմուշ: Աւելի ետք Եղիկեան ղրկեց չափագրութիւն ու նկարագրութիւնը թասին, որուն համար շնորհակալ ենք իրեն եւ թանգարանի տնօրէնութեան: Ծիծեռնակաբերդի Յեղասպանութեան յուշահամալիրը եւ Կիլիկիոյ հայոց կաթողիկոսութեան թանգարանը չունին այս թասերէն: Յունուար 2022ին՝ Մ. Նահանգներու Ուոթըրթաունի (Մեսէչուսէց) Armenian Library and Museum of America մեզի տրամադրեց երեք թասի նկար, համապատասխան չափագրութիւններով (շնորհակալութիւն՝ գործադիր տնօրէն Զէյսըն Սոհիկեանին, Կերի Լինտ Սինանեանին եւ լուսանկարիչին). ստացանք նաեւ չափագրութիւնը չորրորդ թասի մը, առանց նկարի: Այս թասերէն առաջին երեքը պատկանած են Պերճ Կարապետեանի հաւաքածոյին: 20 եւ 22 Նոյեմբեր 2021ին Երեւանի Յովհաննէս Շարամբեանի անուան Ժողովրդական արուեստներու թանգարանի պահեստին մէջ մեր կատարած փնտռուքը չարդիւնատրուեցաւ, մինչ Երեւան քաղաքի պատմութեան թանգարանի պահեստներուն մէջ գտանք նմուշ մը, որ անթուակիր էր եւ չունէր արձանագրութիւն, այլ՝ խորհրդանշան մը: Յատուկ շնորհակալութիւն՝ համապատասխանաբար տնօրէններ Լուսինէ Թորոյեանին եւ Արմինէ Սարգսեանին:

կը, կը կարծենք, կարելի կը դարձնէ գրաւոր ակնարկ մը նետելը անոնց վրայ:

Այստեղ պիտի ջանանք ներկայացնել այս թասերուն մշակման եղանակը, արձանագրել ընդհանրական յատկութիւնները, անդրադառնալ նախշերուն, արձանագրութիւններուն եւ յանգիլ պայմանական եզրակացութիւններու, մասնակի հիմք մատուցելով յառաջիկային կատարուելիք աւելի ամբողջական ուսումնասիրութեան⁸:

Մեր դիտարկումէն դուրս թողած ենք նոյն տեսակի այլ թասեր, որոնք որեւէ արձանագրութիւն չունին: Դուրս թողած ենք նաեւ անոնք, որոնք միայն զարդանախշ-խորհրդանշան ունին:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ⁹ ԵՒ ՄՇԱԿՄԱՆ ԵՂԱՆԱԿ

Թասերը շրջանաձեւ են, յատակի նստուածքը հարթ ըլլալով հանդերձ, ծայրամասերը գոգաւոր են եւ այդ վիճակով (կիսակլոր դրութեամբ) կը բարձրանան վեր, կը գոյացնեն ուռուցիկ փորիկը (իրանը), ապա ուղղահայեաց կ'ուղղուին վեր՝ գոյացնելու համար վիզը ու կ'աւարտին պռունկին յառաջացնելով փոքր ոլորք մը: Թասին ներսը, յատակին կան համակեդրոն շրջագիծեր: Դուրսէն, իրանը եւ վիզը գօտետրուած են մակերեսային շրջագիծերով:

Կարմիր պղնձաթերթէ պատրաստուած այս թասերը ունին նոյն ոճը: Առկայ տարբերութիւնները կը վերաբերին ձեւին, ծաւալին¹⁰ եւ նախշերուն:

Ըստ Յովսէփ Թոքաթի, յատակը հարթելէ ետք բարձրացուած են կողմերը, որմէ ետք, յատակէն դէպի վեր բարձրացող հատուածի առաջին մասը ընդարձակուած է, մինչ շարունակուող հատուածը պահպանուած է իր նեղութեամբ¹¹:

⁷ Տե՛ս՝ *Ջարթօնք* եւ *Արարար* օրաթերթեր, Երեքշաբթի եւ Չորեքշաբթի, 10 եւ 11 Յունուար 2017, *Ազդակ*՝ Հինգշաբթի, 12 Յունուար 2017: Մամուլի մեր յայտարարութեանց արձագանգեցին Թանիա Տէմիրճեան (12 Յունուար 2017) եւ Սեդա Սմարեան Գարաքըլեան (2 Փետր. 2017):

⁸ Մեր եզրակացութիւնները արդիւնք են միայն մեր ի ձեռի ունեցած թասերու դիտարկումներուն:

⁹ Նկարագրութեան համար օգտուած ենք նաեւ Եղիկեանի մեզի դրկած մանրամասնութիւններէն:

¹⁰ Չափ, բարձրութիւն եւ կշիռք (որ կը յառաջանայ նաեւ մետաղի հաստութենէն):

¹¹ Անձնական զրոյց՝ Մ. Նահանգներ, Ա. Էսքիճեան թանգարան, Փետրուար 2016ին:

Աղիասակ հայկական պղնձեայ թասերու պատկանելիութեան, արձանագրութեանց եւ չափագրութեանց									
Թա-սեր	Պատկանելիութիւն	Արձանագրութե.	Կշիռք (կր.)	Բրձրթեւ. (սմ.)	Հատթեւ. (սմ)	Տրմգծ. (սմ.)	Տարի	Վայր	Վիզ (սմ.)
1	Ամերիկահայ Գրադարան-Թանգարան (ԱԳԹ)	ՇԻՐԻՆԻՆՆՅ ՍԱՌԱՅ	1294	7.5	1.45	22.5	1286/1869		
2	ԱԳԹ ²	Լի ՎԱՅՆԵԼՈՒՄԻ ԻՍԿՈՒՀԻ ՏԵՐՏԵՐ ՕՏԱՔԱՇԵԱԼԻ	1389	7	2.5	22.5	1885		
3	Գագիկ Ստեփան Սարգիսեան ³	ԿԱՏԱՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ					1887		
4	Արարատ Էպիսեան Թանգարան (ԱԷԹ) ⁴	ՄԵԼԻՍ ՕՂԼԻ ԳԵՂՈՐԳՈՒ ՈՐԴԻ ՄԱՐԻԵԱՄ		7.6		21.6	1897		3,3
5	Սասուն Սիմոնեան	ՈՒՍԹԱՊԱՇԻԼԵԺԱՊՁԻՊԱՄԱՍՈՒՐԱ ՓԻԼԻՊՈՍԻ ՈՐԴԻ ՄԵԼՆՈՒՇ	632.65	7.2	1-1.2	21.5	1897		
6	ԱԳԹ ⁵	ԽԱՐԲԵՐԴՅԻ ՄԱՐԳՐԻՏ ՏԱՇՕՏԵԱՆ	847	8	2	21.	1897		
7	Ներսէս Պարսումեան	ԽԱՐԱՅ ՏԵՐ ՔԱՄԱՐԱՆԵԱՆ					1898		
8	Ներսէս Պարսումեան	ՍԱՌԱՅ ՏԵՐ ՔԱՄԱՐԱՆԵԱՆ					1899		
9	Սարգսարայատի Ազգագրութեան Թանգարան	ՊԱՅՅԵԱՌ ԸՄԹԱՆՊՈԼԵԱՆ	658	7.6	0.5	21	1900		
10	ԱԷԹ	ՇԻՆԼՕՏԵԱՆ ՄԻՔԱԷԼ ԱՐԱՅԻ ԴՈՒՍՐ ՄԱՐԻԱՄ. Տ.ԿԵՐՏ		7.6		21.6	1900	Տ.Կերտ	3,8
11	Մուրատ Պիլիք	ՄԱՔՐՈՒՀԻ ՎԱՐԻՖԵԱՆ		8	2	21	1900	Թորքաթ	
12	Սեդա Սնարեան-Քարազըլեան ⁶	ԿԱՏԱՐ ՊՈՅՄԱՇԵԱՆ	500	8	2	21	1902	Տ.Կերտ	
13	Հայաստանի Պատմութեան Թանգարան ⁷	«Հայկանուշ Կա(ր)իեան»		9		22.2	1903	Կարչին Թորքաթ	
14	Ներսէս Պարսումեան	ԼՈՒԽԻԵԱՅ					1903		
15	Միհրան Մինասեան	ՆՈՒՐԴ	619		1	21.9	1903		
16	Անդրանիկ Տազեան	ԷԼԻՉԱ ՄՈՒՇԵԼԵԱՆ	710	7.5	1.3	22	25 Մեյստ. 1904		
17	Սասուն Սիմոնեան	ՊԱՅՅԵԱՌ ՖՈՒՐԻՆԵԱՆ	767	8.5	1,3	23.5	1906		
18	Ներսէս Պարսումեան	ՉՈՂՐԱՅ ՏԱՄՈՒՐՏԵԱՆ					1906		
19	Միհրան Մինասեան	Սալլախ Կարապետի դուստր Պայծառ					1906		

20	Անդրանիկ Տազենյան	ՀԱՅԿԱՆՈՒԹ ԴԷՐՊԷՐԵԱՆ	685	8	1.1	21	1908	
21	Սասուն Սիսոնյան	ԱՐԷՔ ՉՈՒՎԱԿԵԱՆ	599	7.5	1.2	21	1909	
22	ԱԳԹ	ԴՈՒՄՅ ՅԱԿՈԲԵԱՆ	866	8	1.25	20.3	1909	
23	Անդրանիկ Տազենյան	ԿԻԼՎԱԴԴ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ	555	7	0.9	20.5	1911	
24	Վիքթորիա Պոյաճյան						1911	
25	Ներսես Պարսումյան	ԱՂԱՆԻ ԹԻՂԶԻԱՆ					1912	
26	Միրան Սիխանյան	ԱԶՆԻՎ ՅԱԿՈԲԵԱՆ	573	6.32	1	20.3	1913	
27	Ներսես Պարսումյան	ԿԱՏԱՐ					1921	
28	Անդրանիկ Տազենյան ¹⁸	روز مسعودي يان [Րոզ Սապունճեան]	670.5	6.1-7	1.5	20.3	1930	

¹² Այս նմուշին նկարը չունինք, այլ միայն չափագրությունն ու անգլիատառ հայերեն արձանագրությունը:

¹³ Թափին տունայնները քաղած ենք *Treasured Objects* գիրքէն, էջ 39):

¹⁴ Նատիա Պարսամի վերջերս նուիրած շուրջ 102 կտոր արձնճեղէին մէջ գտանք մեզ հետաքրքրող երկու թաւ: Ըստ նուիրատուին ասոնք կուզան Արաբկիրէն, Մուշէն եւ Սասունէն:

¹⁵ Պերճ Կարապետեանի հաւաքածոյէն:

¹⁶ Այս թափին մասին իմացանք ելմակի մը միջոցով: Ելմակը ստորագրուած է Սեդա Սմարեան-Գարաքըլեանի կողմէ, որ որոշ տեղեկութիւններ կու տայ թափին մասին, թէ «Կատար Պոյաճեանը իմ հօրենական մեծնորս արջկական մականունն է: Թափը շինուած է Տիգրանակերտ: Հօրս ընտանիքը մինչեւ 1915 Աթրահամեան կը կոչուէր, իսկ այնուհետեւ՝ Սմարեան» (Ելմակ, 2 Մարտ 2017):

¹⁷ Թափին տունայնները քաղած ենք Կիրակոսեանի գիրքէն, էջ 204:

¹⁸ Թափին արձանագրութիւնը եւ թուականը գրուած են արաբերէն:

Ըստ Պուրճ Համուտ բնակող ծերունի պղնձագործ Զաւէն Գազանճեանի¹⁹

30 սանթմնոց *տիսք* մըն է [որմէ] գաւաթ պիտի շինուի: Վեց սանթմնի չափ ամէն մէկ կողմէն ձգելով կարկինով յատակագիծը կը գծեն, ապա կը սկսին դէպի վեր բարձրացնել: Կը բարձրացնեն պէտք եղած հասակով, յետոյ կը սկսին յատակի բաժինէն դէպի վեր բարձրացուած հատուածը ուռեցնել եւ կլորութիւն տալ: Արդէն մետաղը կարծրացած կ'ըլլայ, կրակին վրայ կը թաղեն, մետաղը աղուոր կասկարմիր կ'ըլլայ, կը կակուղնայ, կը հանեն ու ջուրին մէջ կը թաղենք, կը պաղի: Նորէն կը սկսին ծեծել մուրճով, կը սկսին շտկել-հարթել փորիկին կլորութիւնը, *փերտախ* կ'ընեն, նախապէս զարնուած մուրճին տեղերը անհետացնելու համար եւ մուրճին տեղն ալ կ'ելլէ: Փորիկը ամբողջութեամբ, կը վերադառնան վիզին, կը հաւաքեն յետոյ կը շտկեն, հաւասար հորիզոնական մակերես կը յառաջացնեն, յետոյ շիտակ եզերք կը բանան, թէլ կը դնեն մէջը, զայն տարբեր տեղերէ կը բռնեցնեն որ չբացուի (դուրս չելլէ թէլը պղինձէն): Թէլը տարբեր տեղերէ բռնեցնելէ յետոյ կը զարնեն տախտակէ *թոխմախ* ով ու պղինձը կը ծածկեն թէլին վրայ: Բնականաբար զանազան մուրճեր ու սալեր կը գործածեն այս աշխատանքներուն համար: Կամաց-կամաց թէլը կը ծածկուի պղինձով, յետոյ դուրսէն կը սկսին զարնել, կամաց-կամաց եւ պղինձին ծայրը կը փաթթեն թէլին վրայ ու դարձեալ հորիզոնական համահարթութիւն կը յառաջացնեն պոռնկին: ... Այս աշխատանքը շատ-շատ կը տեսէ երկու ժամ: Եթէ մէկը պիտի շինէ տասը հատ կը շինէ օրական:

ՆԱԽԱՏԻՊԱՐ, ՆՄԱՆՈՒԹԻԻՆՆԵՐ ԵՒ ՏԱՐԲԵՐՈՒԹԻԻՆՆԵՐ

Նախապիպար.- առանձին ուսումնասիրութեան նիւթ է այսպիսի թասերու յառաջացման պատմական ընթացքը: Ուշագրաւ է Երեւան քաղաքի պատմութեան թանգարանի կալէ թասը, որ իր ձեւով կը յիշեցնէ մեր ուսումնասիրած պղնձեայ թասերուն ձեւը²⁰:

Նմանութիւններ.-

1) Բոլոր թասերը պատրաստուած են կարմիր պղինձէ: Միքանին կլայրած են:

2) Բոլոր թասերը ունին համակեդրոն շրջագիծեր, որոնք թէ՛ որոշ յարդարանք կու տան թասին, թէ՛ կը ծառայեն անոր համաչափ ձեւաւորման:

3) Մետաղին հարթութեան փաստը կը մղէ մեզ հետեւեցնելու որ արհեստաւորները ոչ թէ իրենք յառաջացուցած են այդ թերթերը, այլ՝ օգտա-

¹⁹ Անձնական հարցազրոյց, 7 Մարտ 2018ին:

²⁰ Այցելութիւն՝ 28 Յունուար 2021: Թասերուն զարգացման ընթացքը (ձեւի, հումքի, չափի թէ՛ այլ առումներով) շահեկան ըլլալով հանդերձ՝ այս յօդուածին ծիրէն դուրս կը նկատենք:

գործած են գործարանային կիսաճարտարարուեստական պղնձեայ թերթեր²¹:



4) Թասերուն մեծ մասը ունի արձանագրութիւններ՝ անուն ազգանուն, եւ թուական: Բոլոր անունները իգական սեռի կը պատկանին, ինչ որ կը հաստատէ թէ ասոնք իգական գործածութեան համար եղած են եւ պատկանած են թասերուն վրայ փորագրուած անուանատէրերուն: Ենթադրելի է որ թասերուն պատուիրատուները եղած ըլլան անուանատէրերուն ծնողքը կամ հարազատը, կամ նոյնինքն արձանագրուած անուանատէրը: Յաճախ այս ենթադրութիւնը կը հաստատուի արձանագրութեան առաջին բաժնին մէջ նշուած հայրանունի գոյութեամբ: Ենթադրելի է նաեւ որ թասերը ապսպրուած ըլլան անուանատէրերուն ծննդեան, մկրտութեան առթիւ կամ՝ իբրեւ օժիտ:



Շիրինինց Սառայի եւ Կիլվարդ Յովհաննէսեանի թասերը

5) Թասերը ունին թուական, որ կ'արտայայտէ անուանատիրոջ կեանքին մէջ անկլինադարձային դէպքի մը, առիթի մը տարեթիւը:

6) Բոլոր թասերը ունին զարդանախշ:

²¹ Այս վարկածը կրնայ հերքուիլ՝ երբ յայտնագործուի թաս մը, որուն տաբերեր մասերը մետաղային տաբերեր հաստութիւններ ունին:

Այս հաւաքածոյին մէջ կան թասեր, որոնք կը թուի նոյն արտադրամասի արդիւնքն են. օրինակ՝ աղիւսակի թիւ 3, 13 եւ 20 թասերը շատ նման են իրարու, նաեւ՝ թիւ 1 եւ 22 թասերը են։

Բ.- Տարբերութիւններ

Ձեւի առումով նկատելի է երեք տարբերակ.-

- 1) Յատակը տափակ կամ ոչ-ողորկ թասեր.
- 2) Կիսալուսնաձեւ իրանի կամ իրանի երկրորդ կէտը անկիւնաւորուած թասեր.
- 3) Պռունկը կլոր կամ հարթ թասեր:

Կան արձանագրութեան ու ձեռագրի տարբերութիւններ. ոմանք գծային են, ուրիշներ՝ աւելի լաւ մշակուած:

Կան նաեւ զարդանախշերու տարբերութիւններ. ոմանք շատ պարզ են, ունին փոքր նախշ-խորհրդանշան մը, մինչ ուրիշներ ունին ճոխ նախշազարդում:



Մէյիկ օղլի Գէորգի որդի Մարիամի եւ
Շխլոյեան Միքայէլի աղայի դուստր Մարիամի թասերը

ԱՐՇԵՍՏԱԻՈՐ, ՎԱՅՐ, ԺԱՄԱՆԱԿ, ԹԱՍԻ ՏԷՐ ՈՒ ՉԱՓԱԳՐՈՒԹԻՒՆ

Դիտարկուած թասերէն ոչ մէկը ստորագրութիւն ունի, կամ կնքուած է: Եղիկեան՝ «Ըսթանպօլեան» թասին վրայ եղած երեք խորհրդանշանները՝ փ փ փ, կը համարէ վարպետին ստորագրութիւնը («հաւանաբար վարպետի նշանն է»)²²: Մեզի այդպէս չի թուիր, որովհետեւ անոնց չենք հանդիպիր նոյն ոճի այլ թասերու վրայ:

Հետեւաբար, մէկտեղուած այս հաւաքածոյին տուեալները թոյլ չեն տար որեւէ ենթադրութիւն կատարելու արհեստաւորներուն մասին: Սակայն կարգ մը թասերու նոյնանմանութենէն մեկնելով կարելի է փաստացիօրէն հաստատել այս արհեստատուներուն գործունէութեան աւելի քան երեսնամեայ տեւողութիւնը:

Թասերուն արձանագրութիւնները եւ այլ կողմնակի տուեալներ կը յուշեն որոշ բան՝ անոնց "ծննդավայր"երուն մասին: Այսպէս, աղիւսակի թիւ 7 արձանագրութիւնը կը խօսի թասի տիրոջ հօր խարբերդցիութեան մասին, թիւ 10 թասի արձանագրութիւնը կը հաւաստէ վայրը՝ Տիգրանակերտ: Որոշ վերապահութեամբ կը մօտենանք թիւ 12 թասի արձանագրութեան, քանի որ ան մեզի փոխանցուեցաւ գրաւոր: Այս ալ կը խօսի Տիգրանակերտի

²² Եղիկեան նամակ:

մասին: Իսկ թիւ 11 թասի տուեալը զոր քաղած ենք համացանցէն կը նշէ Թոքաթը: Մինչ թիւ 3 թասի մասին կը հաւաստուի որ ան գնուած է 1985ին, Ուրֆայէն: Անդին, տակաւին, կարելի է մատնանշել արաբերէն արձանագրութիւնը թիւ 28 թասին, որ մտածել կու տայ թէ գործ ունինք արաբական տարածքի մը, հաւանաբար Հալէպի հետ: Արաբատ-էսքիճեան թանգարանի նուիրատուութեան արձանագրութիւնը կը նշէ թէ իրերը կու գան Արաբկիրէն, Մուշէն ու Սասունէն:

Աւելի հաւաստի են թասերուն 'ծննդեան' թուականները: Մէկտեղուած բոլոր թասերուն արձանագրուած են թուականներ, որոնք կը տարուբերին 1869ի եւ 1930ի միջեւ:

Վերը նշեցինք արդէն թէ այս թասերը պատկանած ու մանաւանդ գործածուած են իգական սեռին կողմէ: Կարապետեան զանոնք կը համարէ բաղնիքի թասեր:

Թասերէն մին ունի 1930 թուակիր արաբատառ արձանագրութիւն մը (թիւ 28): Կարելի է ենթադրել թէ ան աշխատուած ըլլայ Սուրիոյ եւ շատ հաւանաբար Հալէպի մէջ: Կարելի է մտածել, հետեւաբար, որ Արեւմտեան Հայաստանի եւ Փոքր Ասիոյ այլ տարածքներու հայութեան ցեղասպանութիւն-արմատախլում-աքսորէն ետք, Հալէպը դարձաւ գլխաւոր 'ժառանգորդը' հայ պղնձագործութեան...մինչեւ սուրիական փուլը 2011ին ծայր առած «Արաբական գարնան», որ անվերականգնելի ակեր գործեց իմիջիայլոց տեղական արհեստներուն:



Դումա Յակոբեանի եւ Փիլիպոսի որդի Մընուշի թասերը

Ինչպէս ըսինք, թասերը թուակիր են. հնագոյնը՝ 1869, իսկ նորագոյնը՝ 1930: Կարելի է հետեւցնել, ուրեմն, որ այս թասերու արտադրանքին հայ պղնձագործները ձեռնարկած էին առնուազն 1860ականներէն: Եւ քանի որ դժուար թէ Հալէպի հայ պղնձագործները կարենային իրենց ապրուստը ապահովել միայն բաղնիքի թասեր արտադրելով, կարելի է պնդել, թէ այս թասերով շօշափելիօրէն կը հաստատուի Հալէպի մէջ հայ պղնձագործութեան առկայութիւնը գէթ ԺԹ. դարակէսէն:

Թասերուն թուակիրութիւնը ենթադրել կու տայ որ անոնք գործածութեան դրուած ըլլան իրադարձութեան մը առթիւ:

Պէտք է ընդգծել նաեւ որ արդէն 1860ականներուն պղնձեայ իրեղէններու արտադրութիւնը կիսաճարտարարուեստականացած էր:

Չափագրություն. Այս թասերը կը կշռեն 500 կրամէն մինչեւ շուրջ 1390 կրամ: Աղիւսակին տուեալները կը թելադրեն նաեւ նկատել թէ կշիռքի յստակ նուազում մը եղած է 1880ականներու վերջերէն սկսեալ:

Թասերուն բարձրութիւնը կը տարուբերի 6.1-9 սմ.ի միջեւ:

Մետաղին հաստութիւնը կը տարուբերի 0.5-3մմ.ի միջեւ:

Թասերը ունին 20.3-23.5 սմ. տրամագիծ:

Նախշեր եւ խորհրդանշաններ. Ուրիշ առիթի թողլով աւելի մանրամասն քննարկումը թասերուն վրայի նախշերուն եւ խորհրդանշաններուն, այստեղ ըսենք միայն թէ անոնց կը հանդիպինք թասի յատակին, իրանին եւ վիզին վրայ:



Հայկանուշ Պէրպէրեանի եւ Էլիզա Մուշեղեանի թասերը

Թասի տիպ. Բոլոր արձանագրութեանց մէջ կը հանդիպինք իգական անուններու.- Ազնիւ, Աղաւնի, Արէք, Դումայ, Զոհրայ, Էլիզա, Իսկուհի, Լուսինայ, Պայծառ, Հայկանուշ, Կիլվարդ, Կատար, Մանսուրա, Մարգրիտ, Մարիամ/Մարիեամ, Մաքրուհի, Մընուշ, Նուարդ, Սառայ եւ Րոզ:

Կան եւ միքանի արական անուններ՝ Մէլիկ Օղլի Գէորգ, Միքայէլ աղա, Ութապաշի Լօլէ, Սալլախ Կարապետ, Փիլիպոս, ինչպէս եւ մականուններ.- Զարիֆեան, Ըսթանպօլեան, Թերզիան, Կա(ր)չիեան, Մուշէխեան, Յակօբեան, Յովհաննէսեան, Շիրինինց, Շխօեան, Չուվլակեան, Պետրոսեան, Պէրպէրեան, Պօյաճեան, Սապունճեան, Տամուրճեան, Տաշօեան, Տէր Քասրաբեան, Օտաբաշեան, Ֆուռունճեան:

ԱՄՓՈՓՈՒՄ

Եզրափակելով, կրնանք հաւաստել²³ թէ հայկական պղնձագործութեան բաղնիքի թասերու այս տեսակի մեզի ծանօթ նմուշներուն հիմամբ կը պարզուին, թէ այս թասերը պատկանած են հայուհիներու, ունեցած են կիրառական եւ աշխարհագրական լայն ծիր՝ Թոքթաթ (Կարչին), Հալէպ, Ուրֆա, Տիգրանակերտ, որոշ վերապահութեամբ՝ նաեւ Արաբկիր-Մուշ-

²³ Հասկնալի է, որ այս եզրակացութիւնները ենթակայ են փոփոխութիւններու՝ նոր նիւթերու յայտնաբերման պարագային:

Սասուն: Անոնք չեն ստորագրուած եւ ոչ մէկը կը կրէ վարպետի կամ արհեստանոցին անունը:

Ժամանակային առումով անոնք գոյատեւած են գէթ մինչեւ 1930ականները: Անոնց սկսնաւորման թուականը սակայն, կը մնայ անլոյծ, որոշապէս՝ 1860ականներէն առաջ:

Անոնք ընդհանրապէս ունեցած են կայուն ձեւ եւ ենթարկուած են չափազրական ոչ-մեծ ձեւափոխումներու:

A SURVEY ON THE ARMENIAN COPPER BATH TASS

(Summary)

ANTRANIK DAKESSIAN (adakessian@haigazian.edu.lb)

Among the three basically different forms of Armenian bath *tasses* (the Armenian plural for *tass*) of the 19th and early 20th century this study focuses on one specific form. It is the first examination in its kind.

Through extensive research in different museums, catalogues, and private collections the author has been able to collect data on 28 such *tasses* and accordingly develop his observations.

Based on a collection of 28 *tasses*, the study describes these *tasses*, their Armenian inscriptions, the dates and places of their production, and the names of their owners. The study concludes that these were owned and used by females and given to them as a present on a special occasion, which could be their birth or baptism, or wedding. Unfortunately, nothing can be said about the workshops and their Armenian identity as none of the *tasses* has a stamp or the inscription of the craftsman.

The author notes that the *tasses* were produced between the late 1860s and the 1930s, and infers that these were produced in different areas of Western Armenia and the peripheries.

The article offers a table that details the height, diameter, weight, and thickness of the 28 *tasses* described here.